# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 213

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Պուշկինո գյուղի 06-093-0002-0012 ծածկագրի տնամերձ հողամասին՝ 0,12հա, տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Պուշկինո, 2-րդ փողոց, թիվ 47/1:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 21 թ. 06 02
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 214

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, որոշում եմ.

Գումարել համայնքի ավագանու հերթական նիստ 2021թ. հունիսի 09-ին ժամը 11:00-ին համայնքապետարանի վարչական շենքում հետևյալ օրակարգով՝

1.Գյուլագարակ համայնքի ավագանու 2021թ հունիսի 09 -ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2.Գյուլագարակ համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

3.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին:

4.Գյուլագարակ համայնքի ավագանու 2018թվականի հունվարի 22-ի թիվ 07-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

5.Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից հայաստանի համայնքներին՝ կովիդ համավարակով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու նպատակով կազմակերպված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու համաձայնություն տալու մասին:

6. Գյուլագարակ համայնքի Կուրթան, Վարդաբլուր, Գարգառ գյուղերի դպրոցներին դրամաշնորհ տրամադրելու մասին:

7. Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին:

8. Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին:

9.Համայնքի «Ակտիվ երիտասարդ, զարգացող համայնք» ծրագրին հավանություն տալու մասին:

10.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը օտարելու և վարձակալության տալու մասին:

11.Վարձակալության իրավունքով տրամադրված հողամասը և հողամասում առկա շինությունները վարձակալին ուղղակի վաճառքով վաճառելու մասին:

12.Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասը և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը փոխանակելու մասին:

13.Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու

սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին:
14. Վարձակալության իրավունքով տրամադրված հողամասը վերավարձակալին ուղղակի վաճառքով վաճառելու մասին:
15. 06-027-0118-0005 կադաստրային ծածկագրի հողամասի նկատմամբ համայնքի սեփականությունը ճանաչելու մասին:
16. 06-029-0066-0007 կադաստրային ծածկագրի հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու մասին:
17. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:
18. Հողամասերի նկատմամբ համայնքի սեփականությունը ճանաչելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ.Պ. ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2021 թ. 06 02

գ. Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 215

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒՐԹԱՆ ԳՅՈՒՂԻ 06-057-0061-0005 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԿԱՐԼԵՆ ԼԱԴՈՒՇԻ ՎԻՐԱԲՅԱՆԻ,ՊՈՂՈՍՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԳՐԱՏԻ,ՎԻՐԱԲՅԱՆ ԿԱՐԵՆ ԿԱՐԼԵՆԻ, ՎԻՐԱԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԿԱՐԼԵՆԻ,ՎԻՐԱԲՅԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ ԿԱՐԼԵՆԻ ԵՎ ԽԱՐԱԶՅԱՆ ՆԱԻՐԱ ՌԱԶՄԻԿԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ,ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարլեն Վիրաբյանի դիմումը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» Ա/Ձ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16 –րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 2-րդ և 3–րդ հոդվածներով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության Կառավարության 29 դեկտեմբերի 2005 թ. թիվ 2387 որոշմամբ՝ որոշում եմ

1.06-057-0061-0005 ծածկագրի տակ գտնվող 0.05485 հա փաստացի օգտագործման հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Կարլեն Լադուշի Վիրաբյանի, Պողոսյան Սուսաննա Բագրատի, Վիրաբյան Կարեն Կարլենի, Վիրաբյան Արմինե Կարլենի, Վիրաբյան Հռիփսիմե Կարլենի և Խարազյան Նաիրա Ռազմիկի համատեղ սեփականության իրավունքը:
2.Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
3.Վերականգնել և ճանաչել 0,05485 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող,առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտի պահանջելու իրավունք չառաջացնող 1992թ. կառուցված 52,60քմ անասնաշենքի նկատմամբ Կարլեն Լադուշի Վիրաբյանի,Պողոսյան Սուսաննա Բագրատի, Վիրաբյան Կարեն Կարլենի, Վիրաբյան Արմինե Կարլենի, Վիրաբյան

Հռիփսիմե Կարլենի և Խարազյան Նաիրա Ռազմիկի համատեղ սեփականության իրավունքը:

4.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Գյուլագարակ համայնք գյուղ Կուրթան 5-րդ փողոց, 9-րդ նրբ. թիվ 15:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 21 թ. 06 03

գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 216

### ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թերեզա Բուլղադարյանի կողմից ներկայացված դիմումը, 07.11.2014թ. N 07112014-06-0045 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» Ա/Ձ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագծը, որոշում եմ.

1.Հաստատել Գյուլագարակ համայնքի, Կուրթան գյուղի 5-րդ փողոցի 20/8 Ա.Հ.Կ. հասցեում գտնվող տարանջատման արդյունքում առաջացած երկու միավոր անշարժ գույքերի նոր փոստային հասցեները՝

- 06-057-0015-0019-001 շինության 2-րդ հարկի հասցեն թողնել անփոփոխ՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք,գ. Կուրթան 5-րդ փողոց 20/8 Ա.Հ.Կ. շենք:
- 06-057-0015-0019-001 շինության նկուղին տրամադրել նոր հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք,գ. Կուրթան 5-րդ փողոց 20/9 Ա.Հ.Կ. շենքի նկուղ:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 21 թ. 06 03
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

04 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 217

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 91 որոշման, հիմք ընդունելով Հասմիկ Մարիկյանի կողմից ներկայացված դիմումը, «ՀԻԴՐՈԳԱԶՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից մշակված աշխատանքային նախագիծը, որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի բնակիչ Հասմիկ Մարիկյանին տալ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 2-րդ փողոց թիվ 10 հասցեում 2-րդ ռիսկային աստիճանի խանութի կառուցման շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:

2. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2021թ. 06 04
գ.Գյուլագարակ